

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ, ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԴԱՇԻՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ ՍՄԿԿ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

ԷԴ. ՄԻՆԱՍՅԱՆ

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մասին ուսմունքը գիտական կոմունիզմի տեսության անկյունաքարն է, մարդկության առաջադիմության և միջազգային հեղափոխական շարժման կարևորագույն գործոնը: Այն առաջ է քաշվել Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի կողմից, զարգացվել ու հարստացվել է Վ. Ի. Լենինի կողմից, ինչպես նաև կոսսակցական ու սովետական պետական ականավոր գործիչների աշխատություններում:

Սովետական հասարակության զարգացման տարբեր ժամանակաշրջաններում փոխվել են բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ձևերը, սակայն այդ դաշինքի նպատակը՝ սոցիալիզմի և կոմունիզմի կառուցումը, մնացել է անփոփոխ: ՍՄԿԿ-ն համագումարից համագումար ընկած շրջանում զարգացնում ու հարստացնում է բանվորագյուղացիական դաշինքի մարքսլենինյան տեսությունը՝ հասարակության զարգացման նոր պահանջներին համապատասխանող բովանդակությամբ:

ՍՄԿԿ XX, XXII, XXIII, XXIV, XXV, XXVI համագումարներում, Կենտկոմի որոշումներում, ժողովներում ու հանդիսավոր նիստերում՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 60, Վ. Ի. Լենինի ծննդան 100, 110-ամյակներին, կոմունիստական ու բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցություններում ոչ միայն տրված է բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության դաշինքի խոր գիտական բնութագրումը, այլև պարզաբանված է այդ պրոբլեմի ուսումնասիրման հետագա անհրաժեշտությունը, քանի որ զարգացած սոցիալիզմի պայմաններում էլ ավելի մեծ նշանակություն է ստանում այդ դաշինքի ամրապնդումը:

Դա բացատրվում է նախ և առաջ նրանով, որ այդ դաշինքը ընկած է կուսակցության տնտեսական ու սոցիալական քաղաքականության ժամանակակից փուլի հիմքում: Այն հնարավորություն է տալիս պարզելու սովետական ժողովրդի բարոյաքաղաքական միասնության ամրապնդման պրոցեսը: Քաղաքի և գյուղի նյութական բարիքներ արտադրողների միջև դաշինքի ամրապնդումը սոցիալիստական հիմունքներով հասարակության հեղափոխական վերափոխման ընդհանուր օրինաչափություն է: Այս կապակցությամբ տեղին է հիշել Վ. Ի. Լենինի հետևյալ միտքը. «Այն խնդիրը, որ մենք այժմ լուծում ենք առայժմ ժամանակավորապես միայնակ, թվում է զուտ ուսական, սակայն իսկապես այդ մի խնդիր է, որը կանգնելու է բոլոր սոցիալիստների առաջ... նոր հասարակությունը, որը հիմնված կլինի բանվորների և գյուղացիների դաշինքի վրա, անխուսափելի է... նրա համար, այդ հասարակության համար մենք օգնում ենք բանվորներին և գյուղացիներին դաշինքի ձևեր մշակելու, երբ աշխատում

ենք մեր նոր տնտեսական քաղաքականությունը իրականացնելու վրա: Մենք այդ խնդիրը կլուծենք և բանվորների ու գյուղացիների դաշինքը այնքան ամուր կդարձնենք, որ աշխարհի երեսին ոչ մի ուժ այն չի քանդի»<sup>1</sup>: Այդ դաշինքի ամրապնդման ուղղությամբ ՄՄԿԿ փորձը ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն ինչպես մեր երկրի, այնպես էլ սոցիալիստական ընկերակցության երկրների համար: Ինչպես նշվում է Վ. Ի. Լենինի ծննդյան 110-ամյակին վերաբերող ՄՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, «բոլոր երկրների հեղափոխականների գաղափարա-տեսական ու մեթոդաբանական անգնահատելի գենք է դարձել Լենինյան ուսմունքը պրոլետարիատի դաշնակիցների մասին»<sup>2</sup>:

Բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության դաշինքի ամրապնդման օբյեկտիվ անհրաժեշտությունը և կենսունակությունը ատուգված է նաև սոցիալիստական երկրների փորձով: Դաշինքի ամրապնդման ուսումնասիրությունը և այս ուղղությամբ կուսակցության պրակտիկ գործունեության պրոպագանդումը թելադրվում է ոչ միայն գիտական ու պրակտիկ նկատառումներով, այլև քաղաքական խնդիրներով. անհրաժեշտ է մերկացնել բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության դաշինքի նեկատամբ բուրժուական պատմաբանների ու սոցիոլոգների զրպարտանքները:

Իրականում եղբայրական դասակարգերի ու սոցիալական խավերի դաշինքը այն հզոր հասարակական ուժն է, որն ապահովում է մեր երկրում կոմունիզմի հաջող շինարարությունը, ամրապնդելով պետական կարգը:

ՄՄՂՄ արհմիությունների 15-րդ համագումարում ընդգծվեց, որ «կոմունիստական շինարարության արդի էտապում էլ ավելի խոր խմաստ է ստանում բանվոր դասակարգի դաշինքը մեր երկրի կոլտնտեսական գյուղացիության և աշխատավոր ինտելիգենցիայի հետ: Այդ մեծ դաշինքի ցեմենտող ուժը մնում է բանվոր դասակարգը, որն առաջատար դեր է խաղում և կիսադա կոմունիզմի կառուցման գործում: Հենց այդ հիմքի վրա է տեղի ունենում սովետական հասարակության գաղափարա-քաղաքական և սոցիալական հետագա համախումբը, երկրի ազգերի ու ազգությունների մերձեցումը»<sup>3</sup>:

Բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության դաշինքի ամրապնդման տեսական պրոբլեմները և պրակտիկ խնդիրները, որպես սոցիալիստական հեղափոխության հաղթանակի, կոմունիզմի կառուցման կարևոր, ռեալ օրինակափուն իրենց հիմնավորված լուսաբանումն են ստացել մարքսիզմ-Լենինիզմի դասականների աշխատություններում:

Այդ դաշինքի գաղափարը Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը առաջ են քաշել ընդհանուր գծերով: Ապրելով մինչմոնոպոլիտական կապիտալիզմի ժամանակաշրջանում՝ նրանք չէին կարող այդ գաղափարը լուսաբանել իրենցից հետո եկող պատմական դարաշրջանի համար:

Վ. Ի. Լենինը իմպերիալիզմի պատմական պայմաններում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի վերաբերյալ մարքսիզմի հիմնադիրների ուսմունքը զարգացրեց՝ հասցնելով մի նոր բարձր աստիճանի: Ընդհանրացնելով միջազգային և ռուսական հեղափոխական շարժումների փորձը, նա բազմակողմանիորեն հիմնավորեց այդ դաշինքի անհրաժեշտությունը, անխուսափելիությունը ոչ միայն բուրժուազեմոկրատական հեղափոխության մեջ,

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 208:

<sup>2</sup> Վ. Ի. Լենինի ծննդյան 110-րդ տարեդարձի մասին ՄՄԿԿ Կենտկոմի որոշումը, Եր., 1980, էջ 1:

<sup>3</sup> Վ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 3, էջ 655:

ալը և սոցիալիստական հեղափոխության հաղթանակի, սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գործում: Նա բացահայտեց այդ դաշինքի տնտեսական, քաղաքական և գաղափարական հիմքերը, նշեց նրանում մտավորականության տեղը, ցույց տվեց նրա կենսագործման կոնկրետ ուղիներն ու միջոցները:

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի լենինյան ուսմունքը հետագա զարգացում ստացավ ՄՄԿԿ փաստաթղթերում, լենինյան պատգամների համաձայն մշակվեցին մեր հասարակության եղբայրական դասակարգերի ու խավերի տնտեսական, քաղաքական և հոգևոր կապերի ձևերն ու ամրապնդման ուղիները:

ՄՄԿԿ փաստաթղթերում ընդգծվում է, որ կոմունիստական շինարարության շրջանում բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության դաշինքը կենտրոնական տեղ է գրավում: Կոմունիստական կուսակցությունը, ղեկավարելով տնտեսական և կուլտուրական շինարարությունը, իր քաղաքականությունը այնպես է կառուցում, որպեսզի այն նպատակամղվի այդ դաշինքի բազմակողմանի ամրապնդմանն ու զարգացմանը, Դաշինքի մարքս-լենինյան ուսմունքի և հանրային սեփականության ամուր հիմքի վրա ստեղծվեց բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության բարոյաքաղաքական միաժանությունը:

Կոմունիստական կուսակցությունն ունենալով մեծ փորձ, առաջնորդելով վերը նշված տեսությունը՝ սովետական ժողովրդի ուժերով ապահովեց սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում, հաղթանակը մեծ Հայրենականի օրերին, վերականգնեց ժողովրդական տնտեսությունը ետպատերազմյան տարիներին: Այժմ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության ուժերով շարունակվում է զարգացած սոցիալիզմի կառուցումը մեր երկրում:

ՄՄԿԿ-ն համախմբում է դաշինքը ներկայացնող ուժերը երկրի առջև ծառայած խնդիրները լուծելու համար, միաժամանակ միջոցառումներ կիրառում այդ դաշինքի հետագա զարգացման համար:

Դեռ ՄՄԿԿ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումը քննարկելով գյուղատնտեսության վերելքի ապահովման հարցը մատնանշեց, որ գյուղատնտեսության հետ մնալը խոչընդոտող հանգամանք է բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի զարգացման ճանապարհին, բացահայտեց այդ բնագավառում թույլ տրված սխալները և միջոցառումներ մշակեց դրանց անհապաղ վերացման համար: Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մարքս-լենինյան գաղափարները իրենց հետագա զարգացումը ստացան և կոնկրետացվեցին կուսակցության նոր ծրագրում: ՄՄԿԿ XXII համագումարը իրավացիորեն նշեց. «...Բանվոր դասակարգի և գյուղացիության անխախտ դաշինքի հետագա ամրապնդումն ունի վճռական նշանակություն կոմունիզմի կառուցման համար<sup>4</sup>: Որոշելով բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերությունները՝ կուսակցությունը զարգացած սոցիալիզմի պայմաններում ենունում է պրոլետարիատի պատմական միսիայի մասին մարքս-լենինյան դրույթներից, որոնց կենսագործումը կապված է քաղաքի և գյուղի միջև եղած էական տարբերությունների վերացման և գյուղատնտեսական աշխատանքը ինդուստրիալ աշխատանքի տարատեսակ դարձնելու պրոբլեմների լուծման հետ: Այս տեսակետից և մասնավորապես բանվոր դասակարգի և գյուղացիության տրն-

<sup>4</sup> ՄՄԿԿ ծրագիր, Ե., 1974, էջ 71:

տեսական հարաբերությունների կատարելագործման բնագավառում բացառիկ կարևոր նշանակություն ունեցան ՄՄԿԿ Կենտկոմի հոկտեմբերյան, նոյեմբերյան (1964) և մարտյան (1965) պլենումները: Նրանց որոշումները միահամուռ հավանության արժանացան կուսակցության XXIII համագումարում, որտեղ դատապարտվեցին սուբյեկտիվիզմն ու վոլյունտարիզմը, արմատական միջոցառումներ նշվեցին գյուղատնտեսության վեղելքը ապահովելու համար: ՄՄԿԿ Կենտկոմի մարտյան (1965) պլենումը գիտականորեն մշակեց կուսակցության ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները: Այն խնդիր դրեց բարձրացնել գյուղատնտեսության մեքենայացման մակարդակը, կոլտնտեսություններում կիրառել աշխատանքի կազմակերպման ու վարձատրման առաջավոր ձևեր, գյուղատնտեսական մթերքների գնումների տարեկան պլանները դարձնել հնգամյա, միջոցառումներ մշակվեցին կոլտնտեսությունների ու սովետական տնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ: Պլենումը ընդգծեց, որ այս միջոցառումների հաջող կենսագործումը է՛լ ավելի կամրապնդի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, կհանդիսանա վճռական քայլ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում: Տնտեսական բնագավառում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մարքս-լենինյան դրույթների զարգացման կոնկրետ արտահայտությունն են ՄՄԿԿ-ի ձեռնարկած միջոցառումները այդ դաշինքի տնտեսական հիմքի ամրապնդման, քաղաքի և գյուղի աշխատավորության համագործակցության ուժեղացման, ինչպես նաև կուսակցության ժամանակակից ագրարային քաղաքականության կենսագործման ուղղությամբ: Բանվոր դասակարգի և գյուղացիության միջև արտադրական կապերի ամրապնդման ու դարդացման տնտեսական հիմքը սոցիալիստական սեփականություն է: Կոոպերատիվ կոլտնտեսային սեփականության զարգացումն ու նրա աստիճանական մերձեցումը համաժողովրդական սեփականության հետ տեղի է ունենում ինչպես կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի ձևման, այնպես էլ նրանց արտադրության միջոցների հանրախցման մակարդակի բարձրացման ու միջտնտեսական ձեռնարկությունների ստեղծման և ագրոարդյունաբերական ինտեգրացիայի միջոցով:

ՄՄԿԿ Կենտկոմը 1976 թ. մայիսին որոշում ընդունեց «Միջտնտեսային կոոպերացման և ագրոարդյունաբերական ինտեգրացիայի բազայի հիման վրա՝ գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումն ու համակենտրոնացումն էլ ավելի զարգացնելու մասին»: Այդ որոշումը, ինչպես ընդգծեց ՄՄԿԿ Կենտկոմի 1978 թ. հուլիսյան պլենումը, «լենինյան կոոպերատիվ պլանի գաղափարների մարմնավորումն ու հետագա զարգացումն է կոնկրետ պայմաններում»<sup>5</sup>: 1981 թ. սկզբին երկրում արդեն հաշվվում էին մոտ տասը հազար միջտնտեսական ձեռնարկություններ և կազմակերպություններ, ավելի քան 500 արտադրական ագրոարդյունաբերական միավորումներ<sup>6</sup>: Սա նշանակում է, որ կոլտնտեսային սեփականությունը գնալով ավելի ու ավելի է մոտենում համաժողովրդական սեփականությանը, իրագործվում ու ծավալվում է այն պրոցեսը, որը Վ. Ի. Լենինն անվանում էր արդյունաբերության և հողագործության

<sup>5</sup> Տե՛ս Լ. Ի. Բրեձեև, ՄՄԿԿ գյուղատնտեսության հետագա զարգացման մասին (զեկուցում ՄՄԿԿ ԿԿ պլենումում), 1978, Ե., էջ 43:

<sup>6</sup> «Правда», 24 января 1981 г.

միավորում<sup>7</sup>։ Կուսակցության XXVI համագումարում մեկ անգամ ևս ընդգրծվեց, որ «արտադրության հետ գիտության սերտ ինտեգրացումը արդի դարաշրջանի հրամայական պահանջն է»<sup>8</sup>։ Ազգարային քաղաքականության հարցերը որոշելիս կուսակցությունն իր ուշադրությունը կենտրոնացնում է գյուղատնտեսության զարգացման ամենաալժամեական պրոբլեմներին, որոնց լուծմանը ակտիվորեն մասնակցում են բանվոր դասակարգը, Կուտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը։

Բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության դաշինքի տնտեսական հիմքերի ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեցան ՍՄԿԿ Կենտկոմի 1978 թ. հուլիսի 3-ի որոշումը «ՍՍՀՄ գյուղատնտեսության հետագա զարգացման մասին», ՍՄԿԿ XXIII, XXIV, XXV համագումարների մըշակած տնտեսական ստրատեգիան, ՍՄԿԿ XXVI համագումարի կողմից հաստատված «ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թթ. և մինչև 1990 թ. ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները» փաստաթուղթը և ալլն<sup>9</sup>։

Այս բոլոր փաստաթղթերում էլ կուսակցությունը մեծ ուշադրություն է դարձնում գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը։ Օգտվելով երկրի տնտեսական պոտենցիալի ընդլայնումից՝ ամեն տարի գյուղատնտեսության վերելքի համար հատկացվում են մեծ միջոցներ։ Վերջին երկու հնգամյակում գյուղատնտեսության մեջ ներդրվեց 260 մլրդ. ռուբլի։ 1961—70 թթ. գյուղատնտեսության մեջ արտադրական շինարարության համար պետական կապիտալ ներդրումները կազմեցին 110 մլրդ. ռուբլի<sup>9</sup>։

«XI հնգամյակում, — ինչպես նշվեց XXVI համագումարում, — այսուհետև էլ գյուղին կհատկացվեն ֆինանսական և նյութական խոշոր ռեսուրսներ, կշարունակվի այդ ճյուղի պլանաչափ փոխադրումը ինդուստրիալ հիմքի վրա։ Բայց հիմա ծանրության կենտրոնը, և դա 80-ական թթ. ազգարային քաղաքականության տարբերիչ առանձնահատկությունն է, տեղափոխվում է կապիտալ ներդրումների փոխհատուցման վրա, գյուղատնտեսության մթերատվության աճի, ազրարդյունաբերական կոմպլեքսի բոլոր ճյուղերի հետ նրա կապերի խորացման և կատարելագործման վրա»<sup>10</sup>։

Հնգամյակում խնդիր է դրվում գյուղատնտեսությանը մատակարարել 1,870 հազար տրակտոր, 1450 հազար բեռնատար ավտոմոբիլ, հացահատիկի 600 հազար կոմբայն և գյուղատնտեսական այլ տեխնիկա<sup>11</sup>։ Մեծանում է նաև բանվոր դասակարգի դերը գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիայի, մեխորացիայի և հողերի քիմիացման գործում։ Նախատեսվում է էլեկտրաէներգիայի արտադրությունը 1985 թ. հասցնել 1550—1600 մլրդ. կվտ/ժամի<sup>12</sup>։ Սա վկայում է, որ բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության ուժերով կենսագործվում է Վ. Ի. Լենինի այն կանխատեսումը, որ Ռուսաստանի ամբողջ հողագործությունը և արդյունաբերությունը կէլեկտրիֆիկացվի<sup>13</sup>։ Բնական է, որ գյուղին ցուլց տրվող հսկայական օգնությունը նպաստում է գյուղատնտեսական արտադրության վերելքին, որի միջոցով էլ ավելի է ամրա-

<sup>7</sup> Տե՛ս նույնը, 3 января 1980 г.։

<sup>8</sup> «ՍՄԿԿ 26-րդ համագումարի նյութերը», Եր., 1981, էջ 71։

<sup>9</sup> Տե՛ս «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Եր., 1978, էջ 188։

<sup>10</sup> «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 75։

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 370։

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 339։

<sup>13</sup> «Правда», 24 января 1981 г.։

պընդվում բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության դաշինքը: Կուսակցության ժամանակակից ազդարարչին քաղաքականության բնութագիրը տրված է նաև Վ. Ի. Լենինի ծննդյան 110-րդ տարեդարձի մասին ՄՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ: Այնտեղ նշված է. «Ստեղծագործաբար զարգացնելով լենինյան կոոպերատիվ պլանի գաղափարները, ՄՄԿԿ-ն մշակեց և հետևողականորեն իրականացնում է այնպիսի կուրս, որն ապահովում է գյուղատնտեսական արտադրության անընդհատ աճը սոցիալիստական գյուղատնտեսության մեջ արտադրողական ուժերի արագ զարգացման արտադրական հարաբերությունների մշտական կատարելագործման հիման վրա, նրա մասնագիտացման ու համակենտրոնացման զարգացումը, հողագործության և անասնապահության վոլտորայի բարձրացումը»<sup>14</sup>: Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մարքս-լենինյան տեսությունը իր զարգացումն ստացավ ՄՄԿԿ Կենտկոմի 1979 թ. նոյեմբերյան, 1980 թ. հոկտեմբերյան և 1981 թ. նոյեմբերյան պլենումների նյութերում: Այս փաստաթղթերում արտացոլված է ՄՄԿԿ սոցիալ-տնտեսական քաղաքականությունը սովետական բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության դաշնակցային հարաբերությունների կատարելագործման ուղղությամբ: ՄՄԿԿ XXIV համագումարում ընդգծվեց, որ «սովետական հասարակության քաղաքական հիմքը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքն է: Կուսակցության քաղաքականության շնորհիվ թե՛ արտադրությունը, թե՛ գյուղատնտեսությունը բարձրացնելու նրա պրակտիկ միջոցառումների շնորհիվ էլ ավելի ամրապնդվեց այդ մեծ դաշինքը»<sup>15</sup>: Համագումարը բազմակողմանիորեն քննության առավ այնպիսի կարևոր սոցիալական պրոբլեմներ, ինչպիսիք են բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության հետագա մերձեցումը, քաղաքի և գյուղի ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև տարբերությունների աստիճանական հաղթահարման պրոցեսը:

ՄՍՀՄ նոր սահմանադրության մեջ նշվում է, որ «մեր երկրի սոցիալական հիմքը կազմում է բանվորների, գյուղացիների և մտավորականության անխախտ դաշինքը»<sup>16</sup>:

Բանվոր դասակարգի առաջատար դերի ամրապնդումը կապված է նրա գաղափարաքաղաքական հասունության, կրթության և պրոֆեսիոնալ որակավորման աճի հետ: Ամեն տարի մեծանում է բանվոր դասակարգի ազդարարչին ջոկատը, ավելանում ինդուստրիալ որակավորում ունեցող կադրերի թիվը<sup>17</sup>: Այս պրոցեսի հիմքում ընկած են գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները, գյուղատնտեսության մեջ իրականացվող կոմպլեքսային մեքենայացումը, քիմիացումն ու մեխիորացումը: Գյուղական թնակչության ինդուստրիալ խավի առկայությունը, գյուղի սոցիալական կյանքի զարգացման շնորհիվ, արագացնում է քաղաքի և գյուղի միջև էական տարբերությունների հաղթահարման պրոցեսը<sup>18</sup>: Գյուղատնտեսական արտադրության ինդուստրացման հետևանքով խոր փոփոխություններ են տեղի ունենում կոլտնտեսային գյու-

<sup>14</sup> «Վ. Ի. Լենինի ծննդյան 110-րդ տարեդարձի մասին» ՄՄԿԿ Կենտկոմի որոշումը, Ե., 1980, էջ 6:

<sup>15</sup> Լ. Ի. Բրեժնև, ՄՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկ. ՄՄԿԿ 24-րդ համագումարին, Ե., 1971, էջ 114:

<sup>16</sup> Տե՛ս «ՄՍՀՄ սահմանադրություն (հիմնական օրենք)», Եր., 1979, էջ 1:

<sup>17</sup> Տե՛ս «Вопросы истории КПСС», 1981, № 4, էջ 109:

<sup>18</sup> Տե՛ս «Социальная политика КПСС в условиях развит. социализма», М., 1979, էջ 266:

դացիություն կյանքում: Նրա աշխատանքը աստիճանաբար մերձենում է բանվորի աշխատանքին, գնալով ավելի է մեծանում ու սովորանում բանվոր դասակարգի քանակական կազմը: Եթե 1970 թ. բանվորները կազմում էին ամբողջ բնակչության ընդհանուր թվի 57,4 %, կոլտնտեսային գյուղացիությունը՝ 20,5 %, ապա 1979 թ.՝ համապատասխանաբար բանվորները 60,0 %, իսկ գյուղացիները՝ 14,9 %<sup>19</sup>:

Փոխվում է նաև գյուղական բնակչության սոցիալական և քանակական կազմը: Այսօր գյուղում աշխատում են հարյուր հազարավոր մեխանիզատորներ, մտավորականության մեծ բանակ, բժիշկներ, ուսուցիչներ, ագրոնոմներ, անասնաբույժներ, ինժեներներ, տնտեսագետներ և այլն: Հողագործության և անասնապահության աշխատանքները, կապված մեքենայացման հետ, վերածվում են ինդուստրիալ աշխատանքի տարատեսակի: Ժամանակակից գյուղում հաշվվում են ավելի քան 160 գյուղատնտեսական մասնագիտություններ<sup>20</sup>: Ամեն տարի երկրի բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություններն ավարտում և գյուղերն են ուղարկվում 200 հազար մասնագետներ, ավելի քան 460 հազար պատանիներ ու աղջիկներ գյուղական պրոֆտեխնիկական ուսումնարաններում ստանում են տարբեր գյուղատնտեսական մասնագիտություններ<sup>21</sup>:

Այսօր էլ գյուղի կենտրոնական դեմքը մեխանիզատորն է: Ինչպես նշվեց կուսակցության XXVI համագումարում, բարձրագույն կրթությամբ կոլտնտեսականների թիվը տասը տարում ավելացել է, 39 %-ից հասնելով ավելի քան 60 %-ի<sup>22</sup>:

Կուսակցության սոցիալական քաղաքականության իրականացման գործում մեծ է սովետական մտավորականության դերը: Եթե 1970 թ. մեր երկրում մտավոր աշխատանքով զբաղվում էր 31 մլն. մարդ, ապա 1981 թ. նրանց թիվը հասավ 40 մլն.-ի, որից 27 մլն.-ը զբաղված է ժողովրդական տնտեսության մեջ<sup>23</sup>, Մտավորականության մասնակցությամբ ավելի ինտենսիվ է դառնում մասնագետների, բանվորների ու կոլտնտեսականների համագործակցությունը, գիտական աշխատողների համագործակցությունը արտադրողների հետ: Միայն ՀՍՍՀ-ում գիտաշխատողների քանակը հասնում է 18 հազ. 269-ի<sup>24</sup>, ՀԿԿ Կենտկոմի 1981 թ. դեկտեմբերի 2-ի պլենումը նշեց. «Հարկավոր է կրկին ընդգծել այն դերը, որ ժողովրդատնտեսական խնդիրների կատարման ապահովելու գործում խաղում է մեր ստեղծագործական մտավորականությունը»<sup>25</sup>: Կուսակցության XXIV, XXV, XXVI համագումարները բարձր գնահատեցին սովետական մտավորականության դերը կոմունիստական շինարարության խնդիրներն իրականացնելու գործում: Ներկայումս երկրում յուրաքանչյուր շորորդ աշխատողը հիմնականում կապված է մտավոր աշխատանքի հետ: Ոչ միայն գիտության, կրթության, մշակույթի, աղև նյութական արտադրության բնագավառում, հասարակության ամբողջ կյանքում մտավորականությունն ավելի ու ավելի նշանակալի դեր է խաղում<sup>26</sup>, Հանրագումարի բերելով զարգացած

<sup>19</sup> Տե՛ս «Справочник партийного работника», 1981, էջ 518:

<sup>20</sup> Տե՛ս «Вопросы истории КПСС», № 4, էջ 109:

<sup>21</sup> Տե՛ս «Партия и рабоч. класс в условиях стронт. коммунизма», М., 1973, էջ 223:

<sup>22</sup> «ՄՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 85:

<sup>23</sup> «Справочник партийного работника», 1981, с. 518.

<sup>24</sup> «Народное хозяйство Арм. ССР за 60 лет», с. 51

<sup>25</sup> «Սովետական Հայաստան», 1981, դեկտեմբերի 6:

<sup>26</sup> «ՄՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 86:

սոցիալիզմի սոցիալ-դասակարգային կառուցվածքի փոփոխությունները ընթացիկ ժամանակաշրջանում, որոշելով կուսակցության խնդիրները սովետական հասարակության սոցիալ-քաղաքական և հոգևոր զարգացման ասպարեզում, ՍՄԿԿ XXVI համագումարը նշեց. «70-ական թվականներին շարունակվում էր սովետական հասարակության բոլոր դասակարգերի, սոցիալական խմբերի մերձեցումը: Դա օբյեկտիվ, բայց բնավ էլ ոչ սարերային պրոցես է: Դրանում կարևոր դեր է խաղում կուսակցության և պետության սոցիալական քաղաքականությունը: Մեր նպատակն է ստեղծել մի հասարակություն, որի մեջ չի լինի մարդկանց բաժանում դասակարգերի»<sup>27</sup>:

Սովետական համաժողովրդական պետությունը իր սոցիալական քաղաքականությամբ, անկախ մարդկանց դասակարգային պատկանելությունից, ստեղծում է նրանց համար միանման նյութական պայմաններ: 1980 թ. կուտնտեսականների նվազագույն թոշակը բարձրացավ 40 %-ով: XI հնգամյակում բանվորների և ծառայողների միջին աշխատավարձը կբարձրանա 13—16 %-ով՝ հասնելով 190—195 ուրբու: Նախատեսվում է հանրային տնտեսություններից կուտնտեսականների եկամուտները ավելացնել 20—22 %, այն ամբողջությամբ հասցնել բանվորների և ծառայողների մակարդակին: Սա արդեն բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության դաշինքի մարքս-լենինյան տեսության հետագա զարգացման կոնկրետ արտահայտությունն է: ՍՄԿԿ սոցիալ-տնտեսական քաղաքականության շնորհիվ ավելի սերտ է դառնում բանվոր դասակարգի, կուտնտեսային գյուղացիության և մտավորականության համագործակցությունը: «Ամրապնդվեցին բանվոր դասակարգի, կուտնտեսային գյուղացիության և ժողովրդական մտավորականության դաշինքը, սովետական հասարակության սոցիալ-քաղաքական և գաղափարական միասնությունը»<sup>28</sup>,— ասված է ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերում: Զարգացած սոցիալիզմի պայմաններում ընդլայնվում են այդ դաշինքի հիմքերը: Կոմունիստական կուսակցությունը ղեկավարելով դաշինքի ուժերին, հենվելով նրանց սերտ համագործակցության վրա, առավել լրիվությամբ է օգտագործում զարգացած սոցիալիզմի հնարավորությունները, նվաճում նորանոր բնագծեր մեր երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացման շողովրդամբ: Դրա վկայություններից մեկն էլ այն է, որ IX և X հնգամյակներում մեր երկրում 272 մլրդ. ուրբու ավելի գյուղատնտեսական արտադրանք է ստացվել, քան նախորդ երկու հնգամյակներում<sup>29</sup>: ՀՍՄՀ-ում X հնգամյակում 770 մլն. ռուբլով ավելի գյուղատնտեսական մթերք է ստացվել քան իններորդ հնգամյակում<sup>30</sup>:

Ժամանակակից պայմաններում բանվոր դասակարգի, կուտնտեսային գյուղացիության և մտավորականության դաշինքը ներկայանում է որպես դաշնակցային հարաբերությունների բարձրագույն ձև, որի հետագա ամրապնդման ու կատարելագործման ճանապարհով տեղի է ունենում նրանց միջև եղած սահմանների ջնջման պրոցես: Այդ դաշինքն այժմ զարգանում է աշխատանքի և գիտության սերտ կապերում, ընդլայնում իր մասշտաբները՝ ընդհուպ մինչև ֆիզիկական ու մտավոր աշխատողների համագործակցությունը: Դաշնակցային հարաբերությունները միաժամանակ սոցիալիստական ընկերական, համա-

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 56:

<sup>30</sup> Տե՛ս «244 XXVII համագումարի նյութերը», 1981, էջ 30:



գործակցված հարաբերություններ են բանվոր դասակարգի առաջատար դերով, որոնք իրականացվում են հենց հասարակության զարգացման օբյեկտիվ հիմքի վրա: Դրանք փաստորեն հուսալի և ուղիղ ճանապարհ են դեպի բաղձալի անդասակարգ հասարակություն:

«Այսօր նկատի ունենալով 5—10 տարվա հեռանկարները,— ասված է ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերում,— մենք շեն կարող մոռանալ, որ հենց այդ տարիներին կհիմնվի ու կստեղծվի ժողովրդատնտեսական այնպիսի կառուցվածք, որով երկիրը կթևակոխի XXI դարը: Այն պետք է մարմնավորի նոր հասարակության հիմնական գծերն ու իդեալները, լինի առաջադիմության ավանգարդում, մարմնավորի գիտության և արտադրության ինտեգրացումը, ստեղծագործական մտքի և ստեղծագործական աշխատանքի անխախտ դաշինքը»<sup>31</sup>:

Իր էությունից այժմ աշխատավորների դաշինքի պրոբլեմը դուրս է եկել ազգային շրջանակներից, կրում է համընթացանուր բնույթ:

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մարքս-լենինյան տեսությունը և նրա կենսագործման փորձը մեր երկրում ունի համաշխարհային պատմական նշանակություն: «Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդումը,— գրված է 1969 թ. միջազգային բանվորական և կոմունիստական կուսակցությունների խորհրդակցության հիմնական փաստաթղթերում,— մոնոպոլիաների և նրանց իշխանության դեմ մղվող պայքարի հաջողության հիմնական պայմաններից մեկն է»<sup>32</sup>:

Քանի կան դասակարգեր, բանվորության, գյուղացիության և մտավորականության դաշինքը կլինի մարքս-լենինյան տեսության և պրակտիկայի արմատական հարցերից մեկը: Պատահական չէ, որ այն հակակոմունիզմի գաղափարախոսների կողմից հարձակման է ենթարկվում: Բուրժուական տեսաբանները ճգնում են «ապացուցել», որ բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության մերձեցումը անհնարին է, որ սոցիալիզմի երկրներում գյուղացիության շահերը սահմանափակված են<sup>33</sup>: Իհարկե բուրժուական կեղծարարությունը նաև նպատակ է հետապնդում կապիտալիստական և գաղութային երկրների գյուղացիների մեջ անվտանգություն առաջացնել բանվոր դասակարգի նկատմամբ: Զարգացած սոցիալիստական հասարակության կառուցումը մեր երկրում, սոցիալիստական շինարարության հաջողությունները սոցիալիստական երկրներում համոզիչ կերպով հերքում են բուրժուական գաղափարախոսների ամեն տեսակի մեքենայությունները:

**ЭД. Г. МИНАСЯН — Вопросы союза рабочего класса, крестьянства и интеллигенции в современных документах КПСС.**—В статье на основе фактического материала рассматриваются различные аспекты марксистско-ленинской теории союза рабочего класса, крестьянства показаны пути укрепления социально-экономических и политических связей дружественных классов и интеллигенции, что нашло отражение в документах и материалах съездов, пленумов и постановлений ЦК КПСС и ЦК КП Армении, обоснована необходимость дальнейшего изучения данной проблемы в условиях развитого социализма.

<sup>31</sup> Տե՛ս «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 71:

<sup>32</sup> «Լենինյան ուղիով», 1969, № 7, էջ 20:

<sup>33</sup> Մանրամասն տե՛ս

Против буржуазных фальсификаторов истории и политики КПСС», М., 1980, էջ 166, 195, «Партия и интеллигенция в условиях развитого социализма», М., 1977, էջ 239—257. «Молодой интеллиг. развитого социал. общества», М., 1981, էջ 84—104: